

Հայտարարություն

Թափուր պաշտոն՝ Կորպորատիվ հաճախորդների սպասարկման մասնագետ

Աշխատանքի նկարագիր՝ «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ-ն Հայաստանի Հանրապետության խոշորագույն ապահովագրական ընկերություններից մեկն է, որն արդեն 20 տարի շարունակ շուկայում զբաղեցնում է կայուն առաջատար դիրք: Ընկերությունը բարձրորակ ապահովագրական ծառայություններ է մատուցում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձանց՝ պաշտպանելով նրանց տարատեսակ ռիսկերից:

Ընկերության նպատակն է իր հաճախորդների բարձրորակ և պրոֆեսիոնալ սպասարկումը, ինչպես նաև նրանց հետ երկարաժամկետ գործնական փոխհարաբերությունների ստեղծումը: Նպատակի իրագործման համար Ընկերությունը կարևոր է համարում հաճախորդների սպասարկման մասնագետների դերը և առաջարկում է երիտասարդ թեկնածուներին համալրել Կորպորատիվ հաճախորդների սպասարկման մասնագետի թափուր հաստիքը:

Մեր կողմից ընտրված թեկնածուին հնարավորություն կընձեռնվի համագործակցել Հայաստանի խոշորագույն կազմակերպությունների, ինչպես նաև դրանց ղեկավարների և աշխատակիցների հետ: Աշխատանքի առաջին օրվանից սկսած աշխատակիցը ներգրավվում է ուսումնա-աշխատանքային գործընթացի մեջ՝ դառնալով պրոֆեսիոնալ և դինամիկ թիմի անդամ: Նոր մասնագետի ուսուցումը իրականացվում է ինչպես բաժնի ղեկավարի, այնպես էլ թիմի մյուս անդամների կողմից: Կորպորատիվ հաճախորդների սպասարկման մասնագետը պատասխանատու է իրեն կցված հաճախորդների սպասարկման համար՝ համաձայն ստորև բերված աշխատանքային պարտականությունների: Հետագայում, մասնագիտական զարգացման աճի հետ զուգահեռ աշխատակիցը պետք է իր ներդրումն ունենա նոր ապահովագրական ծրագրերի ստեղծման գործընթացում:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Կորպորատիվ հաճախորդների հետ բանակցությունների վարում, գործնական հարաբերությունների ձևավորում և զարգացում
- Հաճախորդների ամենօրյա հարցումների արձագանքում
- Ապահովագրական պայմանագրերի գերազանց իմացություն
- Ապահովագրական պայմանագրերի պայմանների մեկնաբանում
- Կորպորատիվ հաճախորդների պայմանագրերի վերակնքում
- Կորպորատիվ հաճախորդների սպասարկում
- Ապահովագրական պայմանագրերի, տենդերային փաստաթղթերի և կոմերցիոն առաջարկների կազմում
- “Խաչաձև վաճառքի” իրականացում
- Կորպորատիվ հաճախորդների պարտավորությունների մոնիթորինգ
- Կորպորատիվ հաճախորդների հատուցումների պահանջների մոնիթորինգ
- Արձագանքում հաճախորդների բողոքներին
- Այլ պարտականություններ անմիջական ղեկավարի հանձնարարությամբ

Պահանջվող հմտությունները՝

- Բարձրագույն կրթություն տնտեսագիտության, ֆինանսների կամ ապահովագրության ոլորտում
- Ապահովագրական, բանկային, ֆինանսական ոլորտում աշխատանքային փորձը առավելություն է
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն
- Հաղորդակցման և բանակցություններ վարելու գերազանց հմտություններ
- Վաճառքի հմտություններ
- Միջանձնային հաղորդակցման, թիմային աշխատանքի և ներկայացման գերազանց հմտություններ
- MS Office-ի իմացություն, ինչպես նաև նոր ծրագրերի հետ արագ ծանոթանալու ունակություն
- Վերլուծական միտք
- Սեղմ ժամկետներում աշխատելու ունակություն
- Կոնֆիդենցիալ տեղեկատվության հետ աշխատելու ունակություն

Դիմելու կարգը՝ Ուղարկեք Ձեր ինքնակենսագրությունը hr@ingoarmenia.am հասցեով՝ նշելով թափուր աշխատատեղի անվանումը:

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ Հունվարի 20, 2019թ